ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. N--------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N1215-Լ որոշումը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

1. Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Բագրևանդի փողոցի հ.74 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 02.07.2018թ. N 02072018-01-0248 վկայական), 135.720.000 դրամ կադաստրային արժեք ունեցող, 3 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0506-0108) նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի մարտի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճռի (ԵԱՆԴ/0157/02/18) հիման վրա, Երևանի Նոր-Նորք վարչական շրջանի Բագրևանդի փողոցի հ.74 հասցեում գտնվող 3 հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ 02.07.2018թ.-ին գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02072018-01-0248 վկայական, ծածկագիրը՝ 01-008-0506-0108):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N1215-Լ որոշմամբ հաստատվել է «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը, որի 3-րդ կետով նախատեսվել է «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի իրականացման համար հողի սեփականության իրավունքի փոխանցում Երևանի քաղաքապետարանից Հայաստանի Հանրապետությանը (հայեցակարգի 9-րդ կետի համաձայն՝ ինժեներական քաղաք ստեղծելու նպատակով ընտրվել է Բագրևանդի փողոցի 3 հա մակերեսով հողամասը: Նշված հողամասից ոչ հեռու գտնվող տարածքում ճարտարագիտության ոլորտում գործող մասնավոր ընկերությունների կողմից արդեն իսկ կառուցվել են ինժեներական կենտրոնը, ինժեներական գրադարանը, տիեզերքի ու գիտության և տեխնոլոգիաների թանգարանները):

Նվիրատվությամբ տրամադրվող հողամասն ընդգրկված է Երևան քաղաքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 9-ի N 345-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրում:

Կարևորելով «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի իրագործումը առաջարկվում է վերը նշված 3 հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ